«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ ներկայացված է Հայաստանի գործարար միջավայրը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների

հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ:

Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Առաջադրանքի պատասխանատու
Նելլի Սարգսյան

8 մայիս 2024թ
ք. Երևան

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ներդրումային գույք	5	3,391,855	2,980,692
Հիմնական միջոցներ	6	4,724,318	4,181,183
Ոչ նյութական ակտիվներ		-	75
Ֆինանսական ներդրումներ	7	20,000	30,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**8,136,173**	**7,191,950**
Ընթացիկ ակտիվներ			
Պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվներ	8	91,797	51,998
Պաշարներ		2,871	2,706
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	9	92,171	84,377
Ֆինանսական ներդրումներ	7	135,010	127,773
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	45,626	62,855
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**367,475**	**329,709**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**8,503,648**	**7,521,659**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	11		
Բաժնետիրական կապիտալ		75,480	75,480
Պահուստային կապիտալ		11,320	11,320
Վերագնահատման պահուստ		3,792,469	3,353,065
Կուտակված շահույթ		2,894,222	2,525,843
Ընդամենը սեփական կապիտալ		**6,773,491**	**5,965,708**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	213,284	231,166
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	1,442,180	1,268,806
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,655,465**	**1,499,972**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	14	74,692	55,979
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**74,692**	**55,979**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**8,503,648**	**7,521,659**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մայիսի 8-ին:

Գրիգոր Ազիզյան
Տնօրեն

Վեներա Բադիկյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	15	233,793	333,138
Վաճառքի ինքնարժեք	16	(212,623)	(277,080)
Համախառն շահույթ		**21,170**	**56,058**
Գործառնական այլ եկամուտներ	17	180,412	171,522
Իրացման ծախսեր		(208)	(325)
Վարչական ծախսեր	18	(144,559)	(137,285)
Գործառնական այլ ծախսեր	19	(80,620)	(73,073)
Գործառնական շահույթ (վնաս)		**(23,804)**	**16,897**
Զուտ ֆինանսական եկամուտ	20	10,906	14,556
Ներդրումային գույքի վերաչափումից զուտ օգուտ	21	411,163	276,396
Այլ ոչ գործառնական վնաս		(4,018)	(3,175)
Շահույթ մինչև հարկումը		**394,248**	**304,674**
Շահութահարկի գծով ծախս	22	(64,624)	(48,088)
Տարվա շահույթ		**329,624**	**256,586**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին			
Հիմնական միջոցների վերագնահատում	11	610,737	477,667
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	13	(109,933)	(85,980)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**500,804**	**391,687**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**830,428**	**648,273**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ		**110**	**86**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**75,480**	**11,320**	**3,021,120**	**2,224,611**	**5,332,531**
Տարվա շահույթ	-	-	-	256,586	256,586
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	391,687	-	391,687
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**391,687**	**256,586**	**648,273**
Փոխանցում կուտակված շահույթին	-	-	(59,742)	59,742	-
Շահաբաժիններ			-	(15,096)	(15,096)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**75,480**	**11,320**	**3,353,065**	**2,525,843**	**5,965,708**
Տարվա շահույթ	-	-	-	329,624	329,624
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	500,804	-	500,804
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**500,804**	**329,624**	**830,428**
Փոխանցում կուտակված շահույթին	-	-	(61,400)	61,400	-
Շահաբաժիններ	-	-	-	(22,644)	(22,644)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**75,480**	**11,320**	**3,792,469**	**2,894,222**	**6,773,491**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից մուտքեր	260,010	326,990
Գործառնական վարձակալությունից մուտքեր	194,688	172,404
Տրված կանխավճարների ետ վերադարձ	22,960	7,973
Այլ գործառնական մուտքեր	167	5,159
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(284,301)	(253,545)
Վճարումներ մատակարարներին	(134,058)	(120,967)
Վճարումներ պետական բյուջե	(37,318)	(123,284)
Պետական տուրքի գծով վճարներ	(2,182)	(3,135)
Վճարումներ գործուղումների գծով	(3,660)	(2,585)
Շահութահարկի վճարում	(9,226)	(29,600)
Ստացված կանխավճարների ետ վերադարձ	(11,250)	-
Այլ գործառնական ելքեր	(4,123)	(1,462)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(8,292)**	**(22,052)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարումներ	(3,034)	(11,671)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	72
Տոկոսների ստացում	16,391	8,457
Ավանդների տրամադրում	(84,928)	(240,000)
Ավանդի մարում	82,206	213,037
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**10,635**	**(30,105)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(19,572)	(14,691)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(19,572)**	**(14,691)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**(17,229)**	**(66,848)**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,855	129,703
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**45,626**	**62,855**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Ընկերության նկարագիրը

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲ ընկերութունը (այսուհետ նաև Ընկերութուն) 1955 թվականին հիմնադրված «ՀԱՅՊԵՏՆԱԽԱԳԻԾ» Պետական գլխային նախագծային ինստիտուտի իրավահաջորդն է: Ընկերության բաժնետերեր են հանդիսանում նույն ինստիտուտի 428 աշխատակիցները:
Ընկերության գործող կանոնադրության վերջին խմբագրությունը գրանցվել է 2020 թվականի հուլիսի 13-ին ՀՀ արդարադատութան նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից (գրանցման համար՝ 273.130.03674):
Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Չարենց փողոց, շենք 1:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- ✓ տարածքային հատակագծում, քաղաքների, գյուղերի, արդյունաբերական հանգույցների գլխավոր հատակագծերի մշակում,
- ✓ բնակելի, հասարակական, արդյունաբերական շենքերի և այլ ինժեներական օբյեկտների նախագծում, հետազոտություն և ինժեներաերկրաբանական հետախուզական աշխատանքներ,
- ✓ գրասենյակային տարածքների վարձակալությամբ տրամադրում,
- ✓ գիտական ու գիտատեխնիկական աշխատությունների մշակում ու մասնագիտական որակավորման բարձրացման ուսուցում,
- ✓ մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 121 աշխատակից (2022թ. վերջի դրությամբ՝ 126 աշխատակից):

2. Հայաստանի գործարար միջավայրը

2022 թվականի փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը հանգեցրել է և շարունակում է հանգեցնել զգալի զոհերի, բնակչության տեղահանման, ենթակառուցվածքների վնասման և Ուկրաինայում տնտեսական գործունեության խաթարման:

Ի պատասխան՝ բազմաթիվ երկրներ, տնտեսական պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի նկատմամբ:

Բացի պատժամիջոցների սահմանումից, մեծ թվով խոշոր պետական և մասնավոր ընկերություններ հայտարարել են կամավոր գործողությունների մասին՝ Ռուսաստանի հետ բիզնես գործունեությունը սահմանափակելու համար: Այս գործողությունները ներառում են Ռուսաստանում ակտիվների օտարման կամ գործունեությունը դադարեցնելու պլաններ, արտահանման կամ ներմուծման կրճատում և ծառայությունների մատուցման դադարեցում:

Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և դրա հետ կապված իրադարձությունները տեղի են ունենում գլոբալ տնտեսական զգալի անորոշության և անկայունության ժամանակաշրջանում: Ռազմական հակամարտությունը դեռ շարունակվում է և արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են

պատերազմի հետևանքները Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ընդդեմ Արցախի Հանրապետության իրականացված ռազմական գործողությունները հանգեցրել են զգալի զոհերի և բնակչության բռնի տեղահանման: Պատերազմի հետևանքով ավելի քան 100 հազար անձ Արցախից բռնի տեղահանվել են Հայաստանի Հանրապետություն:

Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ռազմական բախումների ակտիվացումը և պատերազմի վերաճումը, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերությունների լարումը կարող են բերել ֆորս մաժորային զարգացումների:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքների ամբողջական ազդեցությունը Ընկերության վրա գնահատել հնարավոր չէ և վերոնշյալ հանգամանքների ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա կարող է բացասական անդրադառնալ նաև Ընկերության գործունեության վրա: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

3. Պատրաստման հիմունքներ

3.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

3.2. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Ընկերության կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

3.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3.4. Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և, որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

3.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Պարտավորությունների դասակարգումը

ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի եթե կազմակերպությունը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ՝ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

Կատարվել է նաև հետագա պարզաբանում այն մասին, որ եթե պարտավորության մարման ժամկետը կախված է կազմակերպության կողմից որևէ կովենանտների բավարարելու փաստից, ապա պարտավորության դասակարգման նպատակով հաշվի են առնվում միայն այն կովենանտները, որոնց կազմակերպությունը պետք է բավարարեր հաշվետու ամսաթվի դրությամբ: Անհրաժեշտ է նաև կատարել կովենանտների վերաբերյալ ռիսկերի գծով բացահայտումներ:

ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ16 «Վարձակալություն». Վարձակալության պարտավորություն, որն առաջանում է հետադարձ վարձակալությամբ վաճառքից

ՖՀՄՍ 16-ում կատարված խմբագրումը պահանջում է, որ վաճառող-վարձակալը վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքում պարտավորությունը հաշվառի այնպես, որ չճանաչվի որևէ օգուտ կամ վնաս վաճառող-վարձակալի կողմից պահվող օգտագործման իրավունքի գծով

Այնուամենայնիվ, վաճառող-վարձակալը կարող է շահույթում կամ վնասում ճանաչել վարձակալության մասնակի կամ ամբողջական դադարեցման գծով օգուտը կամ վնասը:

ՖՀՄՍ 16-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Փոխարկելիության բացակայությունը

ՀՀՄՍ 21-ում կատարված այս լրացմամբ հստակեցվում է, որ արժույթը համարվում է փոխարկելի, երբ կազմակերպությունն ի վիճակի է փոխարկել տվյալ արժույթը այլ արժույթի հետ շուկաներում կամ այլ փոխարկման մեխանիզմով, որն առաջացնում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ առանց անհարկի ուշացումների, և կարող է փոխարկել նշանակալի չափով գումարներ:

Երբ արժույթը փոխարկելի չէ, կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը որպես փոխարժեք, որը կիրառելի կլիներ շուկայի մասնակիցների միջև սովորական փոխանակման գործարքում, և որը ճշմարտորեն արտացոլում է տնտեսական պայմանները: Պահանջվում են նաև համապատասխան բացահայտումներ:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2025թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ7 "Հաշվետվություն դրամական հոսքերի մասին" և ՖՀՄՍ7 "Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ" - Մատակարարին ֆինանսավորման համաձայնություններ

ՀՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել պատշաճ տեղակատվություն մատակարարին ֆինանսավորման համաձայնությունների (երբ ֆինանսավորող միավորը վճարում է/պետք է վճարի մատկարարին ավելի շուտ – հակադարձ ֆակտորինգ) վերաբերյալ, որը ներկայացնում է այդ համաձայնությունների ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական հոսքերի վրա:

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել մատակարարին ֆինանսասավորման համաձայնությունների ազդեցությունը իրացվելիության ռիսկի քանակական բացահայտումների վրա:

ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

4.1 Ներդրումային գույք

Որպես ներդրումային գույք դասակարգվում են այն հողը կամ շենքը կամ շենքի մի մասը, կամ և՛ հողը, և՛ շենքը, որը պահվում է (սեփականատիրոջ կամ վարձակալության շրջանակներում վարձակալի կողմից) վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ ներդրումային գույքի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.
բ) ներդրումային գույքի ինքնարժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գործառնության հետ կապված ծախսումները ներառվում են սկզբնապես չափման մեջ:

Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտը կամ վնասը ճանաչելով այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում այն առաջանում է:

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը տեղի է ունենում այն և միայն այն դեպքում, երբ փոփոխվել է դրանց օգտագործման եղանակը, որի վկայություններն են՝

ա) սեփականատիրոջ կողմից գույքի զբաղեցումը կամ բարելավումը սկսելը՝ սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքի մտադրությամբ. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք,

բ) գույքի բարելավումը սկսելը՝ հետագայում այն վաճառելու մտադրությամբ. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես պաշար.

գ) սեփականատիրոջ կողմից գույքի զբաղեցումը ավարտելը. այս դեպքում սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք. կամ

դ) որպես պաշար դասակարգված գույքի՝ այլ կողմին գործառնական վարձակալության տալը. այս դեպքում պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք:

Երբ պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք, որը հաշվառվելու է իրական արժեքով, ապա այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ Ընկերությունը ավարտում է սեփական ուժերով կառուցվող ներդրումային գույքի կառուցումը կամ բարելավումը, որը հաշվառվելու է իրական արժեքով, ապա այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ներդրումային գույքը ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ այն օտարվում է, կամ երբ ներդրումային գույքն ընդմիշտ դուրս է հանվում օգտագործումից, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օտարումից:

Ներդրումային գույքը դուրս գրելուց կամ օտարելուց առաջացող օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից զուտ մուտքերի և այդ ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում դուրս գրելու կամ օտարելու ժամանակաշրջանում:

4.2 Հիմնական միջոցներ

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներից շենք-շինությունները և հողամասերը, որոնք օգտագործվում են ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատված օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Շենք-շինությունների և հողամասերի վերագնահատումներն իրականացվում են անկախ գնահատողի կողմից՝ բավարար պարբերականությամբ, այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմանական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը, որը ներառվում է սեփական կապիտալում, ուղղակիորեն վերագրվում է չբաշխված շահույթին՝ ակտիվի օգտագործմանը զուգընթաց: Վերագնահատումից արժեքի աճի ամբողջական վերագրումը չբաշխված շահույթին տեղի է ունենում, երբ ակտիվը դուրս է գրվում կամ օտարվում է:

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներից համակարգիչները և սարքավորումները, տրանսպորտային միջոցները, արտադրական և տնտեսական գույքը և այլ հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող

ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից մուտքերի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում առաջընթաց:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենք-շինություններ	30 տարի
Համակարգիչներ և սարքավորումներ	1 - 8 տարի
Տրանսպորտային միջոցներ	2 - 8 տարի
Արտադրական, տնտեսական գույք	1 - 8 տարի

4.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Համակարգչային ծրագրեր	10 տարի

4.4 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

4.5 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունն այնպիսի գործառնություն է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կատարում (կարգավորում):

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.
բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով. և
գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Դրամային հոդվածները առկա դրամական միջոցներն են, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվները և պարտավորությունները: Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները հաշվառելու նպատակով դրամային հոդվածներ են համարվում նաև արտարժույթով տրված և ստացված կանխավճարները:

Ոչ դրամային հոդվածները հաշվեկշռի բոլոր հոդվածներն են, բացառությամբ առկա դրամական միջոցների, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվների և պարտավորությունների: Որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվարկային փոխարժեքը:

Եթե ոչ դրամային հոդվածի գծով օգուտ կամ վնաս է ճանաչվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Եվ հակառակը՝ եթե ոչ դրամային հոդվածի գծով օգուտ կամ վնաս է ճանաչվում շահույթում կամ վնասում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ այն փոխարժեքային տարբերությունների, որոնք նշված են 9-րդ կետում:

Դրամային հոդվածի հետ կապված փոխարժեքային տարբերությունները, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում հաշվետու կազմակերպության կատարած զուտ ներդրման մի մասը, կոնկրետ իրավիճակից ելնելով, ճանաչվում են հաշվետու կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվությունների կամ արտերկրյա ստորաբաժանման անհատական ֆինանսական հաշվետվությունների շահույթում կամ վնասում: Այն ֆինանսական հաշվետվություններում, որոնք ներառում են և՛ արտերկրյա ստորաբաժանումը, և՛ հաշվետու կազմակերպությունը (օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունները, երբ արտերկրյա ստորաբաժանումը դուստր կազմակերպություն է), այդպիսի փոխարժեքային տարբերությունները սկզբնապես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և սեփական կապիտալից վերադասակարգվում են որպես զուտ ներդրման օտարումից շահույթ կամ վնաս:

Արտարժույթ	*31.12.2023թ*	*31.12.2022թ*
1 Եվրո	447.90 դրամ	420.06 դրամ
1 Ռուսական ռուբլի	4.50 դրամ	5.59 դրամ
1 ԱՄՆ դոլար	404.79 դրամ	393.57 դրամ

4.6 Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմում, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապափակ ֆինանսական

արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:

- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:

- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:

- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):

- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը

ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

(ii) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի

նկատմամբ հսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Ընկերությունը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

(iii) Ֆինանսական ակտիվների և Ֆինանսական պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Ընկերության կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Ընկերությունն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝ սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Ընկերությունը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Ընկերությունը իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Ընկերությունը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Ընկերությունը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Ընկերությունը իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

(iv) Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար՝

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Ընկերությունը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ամսաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր:

Ընկերությունը համարում է, որ պարտքային ներդրումային արժեթուղթն ունի ցածր պարտքային ռիսկ, եթե վերջինիս վարկանիշը համարժեք է միջազգայնորեն ընդունված «ներդրումային մակարդակ» սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժակետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Ընկերության հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր. որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք վճարվեն տիրապետողին պարտքային կորուստը հատուցելու համար՝ հանած այն գումարները, որոնք Ընկերությունն ակնկալում է հետ ստանալ:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը, և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում:
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը կամ ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- Հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ վերջին վեց ամիսների ընթացքում: Բացի այդ, անհատներին տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը: Բացի այդ, պարտքային առումով արժեզրկված են համարվում 30 կամ ավելի օր ժամկետանց վարկը, 5 կամ ավելի օր ժամկետանց ներդրումային արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանականությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը:

Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրերը՝ սովորաբար որպես պահուստ:

Դուրսգրումներ

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել պարտքերի գանձման այլ միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

4.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով: Շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

4.9 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում
Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքերի պահուստի միջոցով:

4.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ՝ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված Ընկերություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող արդյունքի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.12 Աշխատակիցների հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ
(դ) ոչ դրամային հատուցումները

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերության աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությանը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.
(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.13 Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպության սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Ընկերությունը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Ընկերությունը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայմանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքագրվեն Ընկերության կողմից:

Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. ճանաչել հաճախորդի հետ պայմանագիրը,

Քայլ 2. ճանաչել պայմանագրային պարտավորությունները,

Քայլ 3. սահմանել գործարքի գինը,

Քայլ 4. կիրառել գործարքի գինը պայմանագրային պարտավորությունների նկատմամբ,

Քայլ 5. ճանաչել հասույթը, երբ Ընկերությունն ավարտում է պայմանագրային պարտավորությունները:

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը Ընկերությունը ճանաչում է, երբ բավարարվում են կատարման պարտականությունները: Կատարման պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստումներ (հանձնառություններ) են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ կամ աշխատանքներ հաճախորդին: Կախված կատարման պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կա՛մ ժամանակի ինչ-որ մի (կոնկրետ որոշվող) պահի, կա՛մ էլ ժամանակի ընթացքում:

Այնքանով, որքանով Ընկերության կողմից կատարմանը համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է հաճախորդի կողմից վճարված հատուցումը, Ընկերությունը ճանաչում է «պայմանագրի գծով ակտիվ», իսկ եթե հաճախորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարմանը համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Հաճախորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է առևտրական դեբիտորական պարտքերի կազմում:

5. Ներդրումային գույք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	**2,980,692**	**2,699,542**
Կապիտալացված հետագա ծախսումներ	-	4,754
Իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	411,163	276,396
Վերջնական մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,391,855**	**2,980,692**

Ներդրումային գույքը հաշվետու ամսաթվի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում: Հետևաբար վերոնշյալ աղյուսակում ներկայացված են ներդրումային գույքի իրական արժեքները:

Ընկերությունը որպես ներդրումային գույք դասակարգել է վարձակալական եկամուտ վաստակելու նպատակով պահվող շենքերը-շինությունները և հողամասերը:

Ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որը որոշվել է լիցենզավորված, անկախ՝ Հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն «Անիկոմ» ՍՊ ընկերության հետ 14.12.2022թ. կնքված թիվ ԱՊ12/22Ա-227 պայմանագրի շրջանակներում կատարված գնահատման հիման վրա: Վերջինս, ներդրումային գույքի իրական արժեքները գնահատել է 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ներդրումային գույքի իրական արժեքը որոշվել է գնահատման ծախսային, համեմատական և եկամտային մեթոդների միջին կշռված արժեքով:

Ընկերությանը պատկանող շենքերը զբաղեցնում են ընդհանուր 15,200.6 քմ. տարածք (հողամասերը՝ 14,108 քմ.), որից 9,271.9 քմ. տարածքը զբաղեցվում է Ընկերության կողմից և ներկայացված է հիմնական միջոցներում (տես ծանոթագրություն 6): Մնացած՝ վարձակալների կողմից զբաղեցված շենքերը, ինչպես նաև համապատասխան տեսակարար կշռով հաշվարկված հողամասերը, դասակարգված են որպես ներդրումային գույք:

Ընկերությունը չունի պայմանագրային պարտավորություններ ներդրումային գույք ձեռք բերելու, կառուցելու կամ բարելավելու, կամ էլ վերանորոգելու, պահպանելու կամ կատարելագործելու գծով:

Ներդրումային գույքի գծով շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալական եկամուտ գործառնական վարձակալություններից	162,453	152,203
Վարձակալական եկամուտ ստեղծած ներդրումային գույքի գծով ուղղակի գործառնական ծախսեր	(66,562)	(62,471)

Վարձակալական եկամուտ չստեղծած ներդրումային գույքի գծով ուղղակի գործառնական ծախսեր առկա չեն:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող	Շենք-շինություն	Համակարգիչներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,938,637**	**1,792,259**	**68,758**	**37,554**	**35,898**	**3,873,106**
Ավելացում	-	-	1,437	-	397	**1,834**
Վերագնահատումից աճ	374,758	102,909	-	-	-	**477,667**
Վերագնահատումից նվազում	-	-	-	-	-	**-**
Կապիտալացում	-	6,574	1,999	204	-	**8,777**
Դուրսգրում	-	(59,742)	(15,628)	-	(1,023)	**(76,393)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,313,395**	**1,842,000**	**56,566**	**37,758**	**35,272**	**4,284,991**
Ավելացում	-	-	1,454	-	1,079	**2,533**
Վերագնահատումից աճ	584,136	79,405	-	-	-	**663,541**
Վերագնահատումից նվազում	-	(52,804)	-	-	-	**(52,804)**
Կապիտալացում	-	-	1,521	223	113	**1,857**
Դուրսգրում	-	(61,400)	(1,466)	-	(397)	**(63,263)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,897,531**	**1,807,200**	**58,075**	**37,981**	**36,067**	**4,836,854**
Կուտակված մաշվածություն						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	**50,952**	**32,396**	**25,745**	**109,093**
Տարվա ծախս	-	59,742	8,050	850	2,168	**70,810**
Դուրսգրում	-	(59,742)	(15,441)	-	(912)	**(76,095)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**	**43,561**	**33,246**	**27,001**	**103,808**
Տարվա ծախս	-	61,400	7,586	880	2,083	**71,948**
Դուրսգրում	-	(61,400)	(1,463)	-	(357)	**(63,221)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**	**49,683**	**34,126**	**28,727**	**112,536**

Հաշվեկշռային արժեք						
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,313,395**	**1,842,000**	**13,005**	**4,512**	**8,271**	**4,181,183**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,897,531**	**1,807,200**	**8,391**	**3,855**	**7,340**	**4,724,318**

Ընկերության շենք-շինությունները և հողամասերը վերագնահատվել են լիցենզավորված, անկախ՝ Հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն «Անիկոմ» ՍՊ ընկերության կողմից՝ 14.12.2022թ. կնքված թիվ ԱՊ12/22Ա-227 պայմանագրի շրջանակներում կատարված գնահատման հիման վրա: Վերջինս, հիմնական միջոցները գնահատել է 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հիմնական միջոցների արժեքը որոշվել է գնահատման ծախսային, համեմատական և եկամտային մեթոդների միջին կշռված արժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 71,708 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 70,398 հազար ՀՀ դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն և դրանց նկատմամբ այլ սահմանափակումներ առկա չեն:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը վաճառքի համար պահվող, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ չունի:

Հիմնական միջոցների գծով մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքի ինքնարժեք	4,481	5,525
Վարչական ծախսեր	65,026	63,502
Պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվներ	2,441	1,783
Ընդամենը	**71,948**	**70,810**

Վերոնշյալ աղյուսակի վաճառքի ինքնարժեքում ներկայացված մաշվածության ծախսը տարբերվում է ծանոթագրություն 16-ում ներկայացված մաշվածության ծախսից, քանի որ ծանոթագրություն 16-ում ներկայացված մաշվածության ծախսը, բացի տվյալ տարվա մաշվածության ծախսից, իր մեջ ներառում է նաև պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվի մեջ առկա մաշվածության ծախսը:

7. Ֆինանսական ներդրումներ

	Ընթացիկ		*Ոչ Ընթացիկ*	
Հազար դրամ	**2023թ.**	**2022թ.**	**2023թ.**	**2022թ.**
Բանկային ավանդներ	132,722	120,000	20,000	30,000
Հաշվեգրված տոկոսներ	2,289	7,773	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**135,010**	**127,773**	**20,000**	**30,000**

Պայմաններ և ստացման ժամկետներ

Ստորև ներկայացվում են դեռևս չստացված ավանդների պայմանները.

Հազար դրամ	*Արժույթ*	*Անվանական տոկոսադրույք*	*Ստացման տարին*	*2023թ.*	*2022թ.*
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	8.75%	2023թ.	-	40,000
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.25%	2023թ.	-	20,000
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.35%	2023թ.	-	40,000
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.50%	2023թ.	-	20,000
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	7.45%	2024թ.	20,000	-
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.00%	2024թ.	20,000	-
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.25%	2024թ.	40,000	-
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.35%	2024թ.	52,722	30,000
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	9.35%	2025թ.	20,000	-
				152,722	**150,000**

Պետական գնումներին մասնակցության շրջանակներում Ընկերությունը ստացել է բանկային երաշխիքներ, որոնց դիմաց, այդ երաշխիքների գործողության ողջ ժամկետի ընթացքում, համապատասխան բանկերում ներդրված ավանդների նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ: Բանկային երաշխիքի պայմանագրի գործողության ընթացքում այդ ավանդների ներդրման պայմանագրերի գործողությունը դադարելու դեպքում գրավադրված գումարը փոխանցվում է Ընկերության ընթացիկ հաշվին, ինչը հիմք չի հանդիսանում գրավադրված գույքի նկատմամբ գրավառուի ունեցած գրավի իրավունքի դադարեցման համար, և գրավադրված գույքի նկատմամբ շարունակվում են կիրառվել պայմանագրերով նախատեսված սահմանափակումները մինչև հիմնական պարտավորության ամբողջական կատարումը:

Գրավադրված ավանդների տվյալները ներկայացված են ստորև՝

Առ 31.12.2023թ. Հազար դրամ

	Արժույթ	Գումար	Սահմանափակման ավարտ
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	37,459	03.06.2024
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	27,200	31.05.2024

Առ 31.12.2022թ. Հազար դրամ

	Արժույթ	Գումար	Սահմանափակման ավարտ
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	14,063	06.09.2023
Բանկային ավանդ	ՀՀ դրամ	40,254	15.09.2023

Արժեզրկում

Ընկերության ֆինանսական ակտիվները պահվում է Ba3 պարտքային վարկանիշով հայկական բանկերում: Պահվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում, քանի որ ակնկալվող

պարտքային կորուստների ռիսկը էական չէ, հաշվի առնելով հայկական բանկերի վարկանիշը, հայկական բանկային համակարգի զարգացվածությունը և ֆինանսական ակտիվների հիմնականում կարճաժամկետ լինելը։

8. Պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվներ

Պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվներն իրենցից ներկայացնում են փոքրաքանակ երեխաներով համալրված "Մոդուլային" տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծահաշվային փաստաթղթերը թվով 10 համայնքներում տեղակապման նախագծահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների և ՀՀ Կոտայքի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների ծախսումները, որոնք բավարարում են ստորև նշված բոլոր չափանիշներին՝

ա) ծախսումները վերաբերում են ուղղակիորեն պայմանագրերին,

բ) ծախսումները կազմակերպության համար ստեղծում են ռեսուրսներ կամ բարելավում են կազմակերպության ռեսուրսները, որոնք օգտագործվելու են ապագայում կատարման պարտականությունները կատարելու (կամ կատարումը շարունակելու) նպատակով, և

գ) ակնկալվում է, որ ծախսերը կփոխհատուցվեն։

Պայմանագրի կատարման հետ կապված ծախսումների գծով ակտիվներն կարճաժամկետ են և սովորաբար մարվում են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում։

Ծախսումների գումարը որոշելիս Ընկերությունը օգտագործել է համակցված մեթոդ, մասնավորապես՝

1) հստակ տարանջատելի ուղղակի ծախսումները, որոնք վերաբերվում են համապատասխան պայմանագրի կատարմանը, ամբողջությամբ վերագրվում են պայմանագրի կատարման հետ կապված ծախսումներին,

2) ոչ հստակ տարանջատելի ուղղակի ծախսումները վերագրվում են պայմանագրի կատարման հետ կապված ծախսումներին, պայմանագրերից հասույթի տեսակարար կշռի հիման վրա հաշվարկված չափով։

Պայմանագրերի կատարումից ծախսումները ճանաչված որպես ակտիվ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արժեզրկելու իրատեսական հիմքեր առկա չեն։

9. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	49,779	33,605
Դեբիտորական պարտքեր վարձակալության գծով	30,071	29,225
Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	-	590
Տրված կանխավճարներ	12,217	19,638
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	103	419
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	-	900
Ընդամենը	**92,171**	**84,377**

Աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 74 օր (2022թ.՝ 48 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման: Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի համար: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը էական չէ:

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	323	184
Ընթացիկ հաշիվներ բանկում	45,302	62,671
Ընդամենը	**45,626**	**62,855**

Ընկերության բանկային հաշիվների մնացորդները պահվում է Ba3 պարտքային վարկանիշով հայկական բանկերում: Պահվող ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում, քանի որ ակնկալվող պարտքային կորուստների ռիսկը էական չէ, հաշվի առնելով հայկական բանկերի վարկանիշը, հայկական բանկային համակարգի զարգացվածությունը և պահվող մնացորդների կարճաժամկետ լինելը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

11. Սեփական կապիտալ

11.1 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 75,480 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 7,548 հատ ձայնի իրավունք տվող սովորական անվանական բաժնետոմսից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքն է 10,000 ՀՀ դրամ: Ընկերության բաժնետիրական կապիտալը ամբողջությամբ տեղաբաշխված է, լրիվ վճարված և պատկանում է 428 ֆիզիկական անձանց: Ընկերության ամենախոշոր բաժնետիրոջը պատկանում է թվով 154 հատ բաժնետոմս, որը կազմում է ընդհանուր բաժնետիրական կապիտալի 2.040276 տոկոսը: Հաշվետու տարում բաժնետիրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

11.2 Պահուստային կապիտալ

Ընկերության պահուստային կապիտալը համաձայն Ընկերության կանոնադրության, կազմում է կանոնադրական կապիտալի 15% -ը, այն է՝ 11,320,000 ՀՀ դրամ:

Եթե պահուստային կապիտալը կազմում է ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից առնվազն 5%-ի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացված միջոցներից:

11.3 Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է շենք շինությունների և հողամասերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդ տարեսկզբին	**3,353,065**	**3,021,120**
Հիմնական միջոցների վերագնահատումից առաջացած աճ	610,737	477,667
Վերագնահատումից հետաձգված հարկային պարտավորություն	(109,933)	(85,980)
Փոխանցում կուտակված շահույթին	(61,400)	(59,742)
Մնացորդ տարեվերջին	**3,792,469**	**3,353,065**

11.4 Շահաբաժիններ

Հաշվետու տարվա ընթացքում հայտարարվել 22,644 հազար ՀՀ դրամ շահաբաժին, վճարվել 19,573 հազար ՀՀ դրամ, (2022թ.՝հայտարարվել է 15,096 հազար ՀՀ դրամ, վճարվել՝14,691 հազար ՀՀ դրամ): Հաշվետու տարվա վերջի դրությամբ շահաբաժնի գծով պարտավորությունը կազմել է ընդհանուր առմամբ 13,175 հազար ՀՀ դրամ (2022թ.՝10,104 հազար ՀՀ դրամ) (տես՝ ծանոթագրություն 14):

12. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներ		
Տարեսկզբի մնացորդ	**231,166**	**248,800**
Տարվա ընթացքում ստացված	-	185
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(17,882)	(17,819)
Տարեվերջի մնացորդ	**213,284**	**231,166**

Ակտիվներին վերաբերող շնորհներն հիմնականում իրենցից ներկայացնում են 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Ընկերությանը սեփականության իրավունքով փոխանցված 14,108 քմ. մակերեսով հողամասերի գնահատված շուկայական արժեքը, հաշվի առած կադաստրային արժեքի գծով օրենքով սահմանված սահմանափակումը այն մասին, որ հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի օտարման դեպքում ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:
Ակտիվներին վերաբերող շնորհները ֆինանսական արդյունքներում ճանաչվում են եկամուտ պարբերական հիմունքով՝ դրանց վրա գտնվող շենքերի օգտակար ծառայության ժամկետում:

13. Հետաձգված հարկային պարտավորություններ

Ընկերությունը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների, որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:
Հետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներ/ժամկետներ, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18%:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	**1,268,806**	**1,143,668**
Շահույթում կամ վնասում ճանաչված	63,442	39,158
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	109,933	85,980
Տարեվերջի մնացորդ	**1,442,180**	**1,268,806**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2023թ. հունվարի 1-ի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	1,817	238	-	1,579
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**1,817**	**238**	**-**	**1,579**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(840,338)	10,690	(109,933)	(741,096)
Ներդրումային գույք	(603,659)	(74,370)	-	(529,289)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,443,997)**	**(63,679)**	**(109,933)**	**(1,270,385)**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,442,180)**	**(63,442)**	**(109,933)**	**(1,268,806)**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2022թ. հունվարի 1-ի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	1,579	500	-	1,079
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**1,579**	**500**	**-**	**1,079**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(741,096)	10,425	(85,980)	(665,541)
Ներդրումային գույք	(529,289)	(50,083)	-	(479,206)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,270,385)**	**(39,658)**	**(85,980)**	**(1,144,747)**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(1,268,806)**	**(39,158)**	**(85,980)**	**(1,143,668)**

14. Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	15,003	8,484
Ստացված կանխավճարներ	-	11,931
Պարտավորություններ պետական բյուջեին	22,718	604
Հատուցումներ աշխատակիցներին	13,706	15,067
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	10,090	8,770
Վճարման ենթակա շահաբաժիններ	13,175	10,104
Այլ պարտավորություններ	-	1,019
Ընդամենը	**74,692**	**55,979**

Առևտրային կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը կազմում է 26 օր (2022թ.՝ 11 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

15. Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքների կատարումից	230,601	330,430
Ծառայությունների մատուցումից	3,192	2,708
Ընդամենը	**233,793**	**333,138**

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը տրոհված՝

Հազար դրամ	Աշխատանքների կատարումից			Ծառայությունների մատուցումից			Ընդամենը			
2023թ.	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Ընդամենը
Սեգմենտի հասույթ՝	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Կապակցված կողմերին	-	-	-	-	-	-	-	-	-	-
Արտաքին հաճախորդներին	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Սեգմենտի հասույթ ըստ ճանաչման ժամանակացույցի	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Ժամանակի որոշակի պահին	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Ժամանակի ընթացքում	-	-	-	-	-	-	-	-	-	-
Սեգմենտի հասույթ ըստ պայմանագրի տևողության	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Կարճաժամկետ պայմանագրեր	179,697	-	-	3,192	-	-	182,889	-	-	182,889
Երկարաժամկետ պայմանագրեր	50,904	-	-	-	-	-	50,904	-	-	50,904
Սեգմենտի հասույթ ըստ գնորդի տեսակի	230,601	-	-	3,192	-	-	233,793	-	-	233,793
Պետական հատված	132,636	-	-	-	-	-	132,636	-	-	132,636
Ոչ պետական հատված	97,965	-	-	3,192	-	-	101,157	-	-	101,157

Հազար դրամ	Աշխատանքների կատարումից			Ծառայությունների մատուցումից			Ընդամենը			
2022թ.	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Հայաստան	ԵՏՄ երկրներ	Այլ	Ընդամենը
Սեգմենտի հասույթ՝	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Կապակցված կողմերին	-	-	-	-	-	-	-	-	-	-
Արտաքին հաճախորդներին	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Սեգմենտի հասույթ ըստ ճանաչման ժամանակացույցի	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Ժամանակի որոշակի պահին	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Ժամանակի ընթացքում	-	-	-	-	-	-	-	-	-	-
Սեգմենտի հասույթ ըստ պայմանագրի տևողության	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Կարճաժամկետ պայմանագրեր	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Երկարաժամկետ պայմանագրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-
Սեգմենտի հասույթ ըստ գնորդի տեսակի	330,430	-	-	2,708	-	-	333,138	-	-	333,138
Պետական հատված	223,611	-	-	-	-	-	223,611	-	-	223,611
Ոչ պետական հատված	106,819	-	-	2,708	-	-	109,527	-	-	109,527

16. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրություն	162,814	225,801
Նյութական-արտադրական ծախսեր	32,025	22,234
Կոմունալ ծախսեր	7,288	13,484
Մաշվածություն և ամորտիզացիա	6,307	10,085
Տրանսպորտի և վառելիքի գծով ծախսեր	2,413	3,796
Գործուղման ծախսեր	1,775	1,680
Ընդամենը	**212,623**	**277,080**

17. Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ վարձակալության գծով	162,453	152,203
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	17,882	17,819
Գործառնական այլ եկամուտներ	77	1,500
Ընդամենը	**180,412**	**171,522**

18. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի վարձատրություն	53,071	50,037
Մաշվածություն և ամորտիզացիա	65,100	63,591
Գրասենյակային, կոմունալ և տնտեսական ծախսեր	11,548	11,732
Սպասարկման ծախսեր	4,215	3,216
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	2,276	1,278
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,534	1,679
Պետական տուրքեր	2,230	2,268
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,128	1,568
Տրանսպորտի և վառելիքի գծով ծախսեր	540	398
Բանկային և ապահովագրական ծախսեր	1,761	1,311
Այլ վարչական ծախսեր	155	207
Ընդամենը	**144,559**	**137,285**

19. Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տույժ տուգանքների գծով ծախսեր	4,047	1,609
Վերանորոգման ծախսեր	11,508	8,803
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրում	1,200	5
Անձնակազմի վարձատրություն	38,238	35,784
Կոմունալ ծախսեր	25,370	26,327
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	157	360
Գործառնական այլ ծախսեր	100	185
Ընդամենը	**80,620**	**73,073**

20. Զուտ ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտ		
Ավանդների գծով տոկոսային եկամուտ	10,906	14,556
	10,906	**14,556**
Ֆինանսական ծախս		
-	-	-
-	**-**	**-**
Զուտ ֆինանսական եկամուտ	**10,906**	**14,556**

21. Ներդրումային գույքի վերաչափումից զուտ օգուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գույքի վերաչափումից վնաս	(45,525)	-
Ներդրումային գույքի վերաչափումից օգուտ	456,688	276,396
Ընդամենը	**411,163**	**276,396**

22. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ	(1,182)	(8,930)
Հետաձգված	(63,442)	(39,158)
Ընդամենը	**(64,624)**	**(48,088)**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	394,248		304,674	
Շահութահարկ՝ 18%	(70,965)	18%	(54,841)	18%
(Չհարկվող եկամուտ) / չնվազեցվող ծախսեր, զուտ	6,341	-2%	6,753	-2%
Շահութահարկի գծով ծախս	(64,624)	16%	(48,088)	16%

23. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի: Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին:

24. Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
Ավանդներ	155,010	157,773
Առևտրային դեբիտորական պարտքեր	79,850	63,420
Դրամական միջոցներ	45,626	62,855
Ընդամենը	**280,486**	**284,048**

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	15,003	8,484
Ընդամենը	**15,003**	**8,484**

25. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

- ✓ ***Արտարժութային ռիսկ***

Ընկերությունը հաշվետու և համադրելի տարիների ընթացքում գործարքներն իրականացրել է ՀՀ դրամով և, հետևաբար, չի ենթարկվել արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:
Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:
Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ավանդներ	155,010	157,773
Դեբիտորական պարտքեր	79,850	63,420
Մնացորդներ բանկերում	45,302	62,671
Ընդամենը	**280,163**	**283,864**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:
Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը:

2023թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	15,003	-	-	15,003
Ընդամենը	**15,003**	**-**	**-**	**15,003**

2022թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	8,484	-	-	8,484
Ընդամենը	**8,484**	**-**	**-**	**8,484**

դ) Տոկոսադրույքի ռիսկ

2023թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Ավանդներ	132,722	20,000	-	152,722
Ընդամենը	**132,722**	**20,000**	**-**	**152,722**

2022թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Ավանդներ	120,000	30,000		150,000
Ընդամենը	**120,000**	**30,000**	**-**	**150,000**

26. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են Խորհրդի անդամները և նրանց հետ կապակցված անձինք:
Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Խարհրդի անդամների հետ կատարված գործարքներ

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2023	2023թ.		Մնացորդը առ 01.01.2023
		Մարում	Հաշվեգրում	
Շահաբաժին	-	(2,670)	2,670	-
Գործուղում	-	(503)	503	-
Աշխատանքի վարձատրություն	2,096	(33,274)	33,523	1,847
Չօգտագործված արձակուրդի պահուստ	1,664	(2,503)	2,698	1,470

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2022	2022թ.		Մնացորդը առ 01.01.2022
		Մարում	Հաշվեգրում	
Շահաբաժին	-	(1,552)	1,552	-
Գործուղում	-	(290)	290	-
Աշխատանքի վարձատրություն	1,847	(32,553)	33,204	1,196
Չօգտագործված արձակուրդի պահուստ	1,470	(93)	250	1,313

27. Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

28. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Ընկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստային կապիտալը և կուտակված շահույթը:
Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:
Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	6,773,491	5,965,708
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(45,626)	(62,855)
Կապիտալ	**6,727,865**	**5,902,853**
Ընդհանուր սեփական կապիտալ	6,773,491	5,965,708
Վարկեր և փոխառություններ	-	-
Ընդհանուր ֆինանսավորում	**6,773,491**	**5,965,708**
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	**0.99**	**0.99**

29. Պայմանականություններ

29.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

29.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

29.4 Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

29.5 Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

30. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում: